ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/18

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ժ. Ղալթախչյանի

Մասնակցությամբ՝

Բողոքաբերի ներկայացուցիչ՝ Համլետ Իսահակյան

Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Անի Թաշչյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 25.04.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 6 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 9 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 10 գիշերօթիկ մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 11 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 12 մանկապարտեզ ՀՈԱԿ կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված համապատասխանաբար ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-01-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-02-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-03-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-04-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-05-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-06-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-07-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-09-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-10-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-11-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-12-19/1 ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովներին դադարեցնել «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումները, նույն չափաբաժինների մասով հաջորդաբար տեղ զբաղեցբող մասնակիցներ ճանաչելու մասին որոշումները և չկայացած հայտարարելու մասին որոշումները:

Բողոքներ քննող անձի 25.04.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 02.05.2019թ. նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 02.05.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.05.2019 թ.:

2. «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Արմավիրի մարզի մի շարք մանկապարտեզների (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների 03.04.2019թ. և 04.04.2019թ. հայտ է ներկայացրել նաև «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ն և մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղն զբաղեցնող մասնակից, կան նաև չափաբաժիններ, որտեղ Ընկերությունը եղել է միակ մասնակիցը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Հանձնաժողովները թիվ 2 արձանագրությամբ որոշել են հարցում ներկայացնել ՀՀ ՊԵԿ՝ վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների պարզելու համար:

Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների թիվ 3 արձանագրությունների համաձայն՝ Կոմիտեի կողմից տրված եզրակացության համաձայն Ընկերությունը հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 83.000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է Օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված շեմը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը, իսկ այն չափաբաժինների, որոնց մասով հայտ էր ներկայացրել միայն «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ն հայտարարվել է չկայացած:

Նույն թիվ 3 արձանագրությունների համաձայն 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ են ճանաչվել հաջորդող եժան գին ներկայացրած մասնակիցները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5

աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշում-ները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Այսպիսով, ցանկանում ենք նշել, որ Ընկերության մոտ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 03.04.2019թ. և 04.04.2019թ. դրությամբ «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի (այսուհետ նաև՝ Քաղվածք) համաձայն՝ Ընկերությունը ընդհանրապես չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, այլ ունի միասնական հաշվում առկա 754.820 ՀՀ դրամ և ԱԱՀ-ի մասով 33.522.107 ՀՀ դրամ դեբետային մնացորդ (գերավճար):

Ընկերությունը հիմք ընդունելով վերոնշյալ պաշտոնական Քաղվածքից վերցված տվյալները և համոզված լինելով, որ «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների չափը չի գերազանցում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը, հայտ է ներկայացրել և մասնակցել է Ընթացակարգին:

Սակայն, ի զարմանս Ընկերության, պարզվել է, որ «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ:

Ցանկանում ենք նշել, որ դրոշմանիշային վճարի մասով Քաղվածքի մեջ որևէ նշում չկար և Ընկերությունը չէր կարող տեղեկանար կամ կանխատեսեր, որ դրոշմանիշային վճարը հանդիսանում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ, այսինքն այս

դեպքում առկա է իրազեկման խնդիր, որպեսզի մրցույթի մասնակիցները տեղեկացված լինեի և կատարի համապատասխան վճարումները:

Բացի այդ, 2018թ. հունիսի 11-ի ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին թիվ 702-Լ որոշման 11-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն 'կոմիտեի խնդիրներն են պետական հարկերի և վճարների վճարման նկատմամբ հսկողության իրականացումը: Հարկային օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են ՀՀ-ում կիրառվող հարկատեսակները, որտեղ բացակայում է դրոշմանիշային գծով հարկատեսակը:

Նույն հոդվաշի 2-րդ մասով սահմանված է, որ ՀՀ-ում չեն կարող սահմանվել այնպիսի հարկեր, որոնք նախատեսված չեն նույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով:

Հարկային օրենսգրքի 7-րդ հոդվածի ամաձայն՝ ՀՀ-ում կիրառվում են պետական և տեղական վճարներ, որտեղ նույնպես բացակայում է դրոշմանիշային գծով վճարումները:

Հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածները հստակ սահմանում են այն բոլոր հարկերի և վճարների տեսակները, որոնց նկատմամբ հսկողություն է իրականացվում հարկային մարմնի կողմից: Այսինքն այս պարագայում պարզ է դառնում, որ դրոշմանիշային վճարը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ չէ:

Գտնում ենք, որ «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ն բավարարել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին, քանի որ տվյալ դեպքում, Ընկերությունը ընթացակարգերի արդյունքում՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացնելու պայմաններում ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, սակայն Կոմիտեի կողմից տրված եզրակացության պատճառով զրկվել է պայմանագիր կնքելու հնարավորությունից, դրանով իսկ «մեկուսացվելով» պայմանագրի կողմ հանդիսանալուց:

Խնդրում ենք սույն բողոքի վերաբերյալ որոշում կայացնելիս նաև հաշվի առնել ՀՀ պետական բյուջեին տրված օգուտը, ներկայացված ցածր գինը, որակը և այն հանգամանքը, որ «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ն հանդիսանում է ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում գործող ընկերություն: Իր ամբողջ գորշունեության ընթացքում ընկերությունը գործել է ի բարօրություն Արմավիրի մարզի, և իր գործունեությունը ծավալում է միայն Արմավիր քաղաքում: Մեր կարծիքով շատ ավելի նպատակահարմար կարող է լինել Արմավիր քաղաքի մանկապարտեզների համար նույն քաղաքում գտնվող ընկերության կողմից մատակարարումների իրականացումը, քանի որ այնպիսի ապրանքներ՝ ինչպիսին է հացը միանգամայն ավելի էֆեկտիվ կլինի մատակարարել այն

պատրաստելուց հետո 10 որպեի ընթացքում, քան այն բերվի Երևան քաղաքից, կամ օրինակ ավելի հեռու մարզերում գտնվող կազմակերպությունների կողմից:

Ելնելով վերոգրյալից՝ «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով խնդրել է.

Պարտավորեցնել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 6 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 9 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 10 գիշերօթիկ մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 11 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 12 մանկապարտեզ ՀՈԱԿ կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված համապատասխանաբար ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-01-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-02-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-03-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-04-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-05-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-06-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-07-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-09-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-10-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-11-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-12-19/1 ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովներին դադարեցնել «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումները, նույն չափաբաժինների մասով հաջորդաբար տեղ զբաղեցրող մասնակիցներ ճանաչելու մասին որոշումները և չկայացած հայտարարելու մասին որոշումները»:

3. **<u>ՀՀ Արմավիրի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը 26.04.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ Արմավիրի համայնքապետարան՝ խնդրելով Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից գրավոր որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուի ներկայացուցիչը ներկայանալով նիստին բանավոր հայտնել է, որ Տվյալ գնման ընթացակարգերի շրջանակներում հանձնաժողովը իր որոշումները կայացրել է ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով:

4. **<u>ԳԲՔԱ-LO-2019/18 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ի կողմից 25.04.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:
- 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով

սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ հարկային օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ ենթակետի համաձայն՝ հարկային մարմինը հարկ վճարողների սպասարկման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները. ... իրական ժամանակում առցանց եղանակով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի (այդ թվում՝ հարկային պարտավորությունների և դրանց մարումների) դիտման հնարավորության ապահովում:

Նույն օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկ վճարողը հնարավորություն ունի արտատպելու իր անձնական հաշվի քաղվածքը, որտեղ նշված տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն և, ըստ անհրաժեշտության, ընդունվում է այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Սույն գործի փաստերի համաձայն՝

Արմավիրի համայքապետարանի կողմից թվով 7 մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել են ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-01-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-02-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-03-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-04-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-05-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-06-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-07-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-09-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-10-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-11-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-12-19/1 ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգեր (այսուհետ նաև՝ Ընթացակարգեր), որոնց մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգերի շրջանակներում գնահատող հանձնաժողովների կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (03.04.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 83.000 ՀՀ դրամ գումարի չափով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 16.04.2019թ. «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ին տրված թիվ 2457 տեղեկանքի համաձայն՝ 83.000 ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց պարտավորությունը գոյացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

«Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ հայտը ներակայացնելու օրվա (03.04.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ առկա չեն՝

միասնական հաշվում արտացոլված են 754.820 ՀՀ դրամ և ԱԱՀ-ի մասով 33.522.107 ՀՀ դրամ դեբետային մնացորդ (գերավճար):

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից գնահատող հանձնաժողովներին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ի Ընթացակարգերին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (03.04.2019թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 83.000 ՀՀ դրամ:

- «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ հայտը ներակայացնելու օրվա (03.04.2019թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

Տվյալ դեպքում ՀՀ հարկային օրենսգրքի մեջբերված հոդվածների դրույթների՝ գործի փաստերի հետ համադրման արդյունքում պարզ է դառնում, որ Ընկերությունը, օգտվելով իրեն վերապահված իրավունքից, իրացրել է այն, համոզված լինելով դրա օրինականության և ճշտության մեջ՝ որպես հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ն, արտատպելով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, չէր կարող չունենալ լիարժեք և միևնույն ժամանակ օբյեկտիվ համոզմունք ստացված տեղեկատվության հավաստիության նկատմամբ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա (03.04.2019թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն, քանի որ այն, ինչպես ՀՀ հարկային օրենսգրքի 313-րդ հոդվածն է սահմանում, պետք է ընդունվեր այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից և համարվեր հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ի կողմից 25.04.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

Պարտավորեցնել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 6 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 9 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 10 գիշերօթիկ մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 11 մանկապարտեզ ՀՈԱԿ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 12 մանկապարտեզ ՀՈԱԿ կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված համապատասխանաբար ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-01-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-02-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-03-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-04-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-05-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-06-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-07-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-09-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-10-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-11-19/1, ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-12-19/1 ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովներին ընդունել՝ «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումները, նույն չափաբաժինների մասով

հաջորդաբար տեղ զբաղեցնող մասնակիցներ ճանաչելու մասին որոշումները և չկայացած հայտարարելու մասին որոշումները դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ